Հավելված «Հաստատված է»

Երևանի պետական համալսարանի Իջևանի Մասնաճյուղի

գիտական խորհրդի 2020թ. փետրվարի 22-ի թիվ 43 նիստում

ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի նախագահ՝ _____Ա. Հ. Մակարյան

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ «ՏԱՎՈՒՇ» ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Սույն կանոնադրությունը սահմանում է «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի (այսուհետ՝ ԵՊՀ ԻՄ) «Տավուշ» հետազոտական կենտրոնի (այսուհետ՝ Կենտրոն) գործունեության իրավական հիմքերը:

1.2. Կենտրոնը կառուցվածքային ստորաբաժանում է, որն իր իրավասությունների սահմաններում ապահովում է ԵՊՀ ԻՄ օրենքով և այլ իրավական ակտերով վերապահված խնդիրների և գործառույթների իրականացումը:

1.3. Սույն կանոնադրությունը հաստատվում է ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդում:

1.4. Կենտրոնը կարող է վերակազմակերպվել կամ լուծարվել համաձայն ԵՊՀ ԻՄ կանոնադրության պահանջների:

1.5. Կենտրոնի կանոնադրության և ԵՊՀ ԻՄ կանոնադրության դրույթների միջև հակասություն առաջանալու դեպքում գործում են ԵՊՀ ԻՄ կանոնադրության դրույթները:

1.6. Կենտրոնն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է ՀՀ օրենսդրությամբ, ԵՊՀ ԻՄ-ի կանոնադրությամբ, ինչպես նաև ԵՊՀ ԻՄ կառավարման մարմինների, իրենց իրավասության շրջանակում ընդունված իրավական ակտերով:

1.7. Կենտրոնի անվանումն է՝

1.7.1. հայերեն լրիվ՝ **«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի «Տավուշ» հետազոտական կենտրոն**:

1.7.2. ռուսերեն լրիվ՝ **Исследовательский центр «Тавуш» Иджеванского филиала Ереванского государственного университета**:

1.7.3. անգլերեն լրիվ՝ **«Tavush» Research Center of Ijevan Branch of Yerevan State University**:

1.8. Կենտրոնը իր գործունեությունն իրականացնում է ԵՊՀ ԻՄ անունից:

2. ԿԵՆՏՐՈՆԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

2.1. Կենտրոնի ստեղծման նպատակներն են՝

2.1.1. ԵՊՀ ԻՄ-ում գիտահետազոտական, գիտակրթական և գիտամեթոդական գործունեության զարգացումը, բնագիտական, սոցիալ-տնտեսական, հումանիտար և մշակույթի ոլորտներում հետազոտական ծրագրերի մշակումը, կազմակերպումը և իրականացումը,

2.1.2. կրթական գործընթացի հետ գիտական հետազոտությունների կապի ապահովումը,

2.1.3. հետազոտական աշխատանքների արդյունքների առևտրայնացումը,

2.1.4. նորարական մշակումների իրականացումը,

2.1.5. հետազոտությունների արդյունքների հրապարակայնացումը,

2.1.6. հետազոտական պայմանագրերի և դրամաշնորհների ներգրավումը,

2.1.7. ներհամալսարանական դրամաշնորհների հայտարարումը և մրցույթների կազմակերպումը,

2.1.8. գիտական սեմինարների, աշխատաժողովների, գիտաժողովների կազմակերպում և անցկացում՝ հայաստանցի և/կամ օտարերկրյա մասնագետների մասնակցությամբ,

2.1.9. գիտահետազոտական աշխատանքներին ուսանողների մասնակցության աջակցումը:

2.2. Կենտրոնի հիմնական խնդիրներն են՝

2.2.1. հետազոտական, փորձագիտական-վերլուծական խորհրդատվական գործունեության իրականացում՝ կազմակերպությունների, իրավաբանական և ֆիզիկական անձանց համար,

2.2.2. ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի կողմից սահմանված ոլորտներում դրամաշնորհների մրցույթների հայտարարում և անցկացում,

2.2.3. ԵՊՀ ԻՄ-ում իրականացվող գիտական հետազոտությունների թեմատիկային վերաբերող հայաստանյան և համաշխարհային փորձի ուսումնասիրություններ,

2.2.4. հետազոտական, փորձագիտական-վերլուծական աշխատանքներում ուսանողների և դասախոսների ներգրավում, նրանց գիտական, ստեղծագործական մտքի զարգացման համար համապատասխան պայմանների ստեղծում,

2.2.5. հայաստանյան, արտասահմանյան և միջազգային կազմակերպությունների հետ համատեղ հետազոտական գործունեության կազմակերպում,

2.2.6. կրթական գործընթացում Կենտրոնի կողմից իրականացված հետազոտությունների ու մշակումների արդյունքների գործնական կիրառման աջակցություն:

2.3. Կենտրոնն իրականացնում է հետևյալ գործառույթները՝

2.3.1. Կազմակերպում և իրականացնում է տարածաշրջանի սոցիալ տնտեսական զարգացման և անվտանգության ապահովմանն ուղղված կիրառական և հիմնարար հետազոտություններ,

2.3.2. բացահայտում է տարածաշրջանի հետազոտական կարիքները և ձևավորում գիտական հետազոտությունների ծրագրեր, այդ թվում՝ երկարաժամկետ,

2.3.3. իրավաբանական և ֆիզիկական անձանց համար կազմակերպում է գիտական հետազոտությունների և մշակումների պատվերների կատարում,

2.3.4. կազմակերպությունների հետ համատեղ կազմակերպում է ծրագրային փաստաթղթերի փորձաքննություն, կազմակերպում է ներհամալսարանական դրամաշնորհների փորձաքննություն,

2.3.5. խթանում է դասախոս-ուսանող համատեղ հետազոտական աշխատանքների կատարումը,

2.3.6. հետազոտական գործունեության իրականացմանը ներգրավում է գիտնականների և փորձագետների,

2.3.7. նպաստում է անհրաժեշտ տեղեկատվական և նյութատեխնիկական բազայի ձևավորմանն ու զարգացմանը, ստեղծում է տարածաշրջանի և Կենտրոնի

հետաքրքրությունների շրջանակներում գտնվող այլ հետազոտությունների էլեկտրոնային բազա և պարբերաբար համալրում այն,

2.3.8. կազմակերպում է հետազոտությունների արդյունքների հրապարակումը։

3. ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

3.1. Կենտրոնի գործունեությունը կազմակերպում և ղեկավարում է Կենտրոնի ղեկավարը՝ իր իրավասությունների սահմաններում, ԵՊՀ ԻՄ և սույն կանոնադրության համաձայն։

3.2. **Կենտրոնի ղեկավարը՝**

3.2.1. կազմակերպում, ծրագրում, համակարգում, ղեկավարում և վերահսկում է Կենտրոնի ընթացիկ գործունեությունը։

3.2.2. Կենտրոնին վերապահված խնդիրների և գործառույթների վերաբերյալ առաջարկություններ է ներկայացնում ԵՊՀ ԻՄ տնօրենին,

3.2.3. իր իրավասություններ սահմաններում հանձնարարություններ է տալիս Կենտրոնի աշխատակիցներին,

3.2.4. տնօրենին առաջարկություններ է ներկայացնում Կենտրոնի աշխատակիցների նկատմամբ խրախուսանքի և կարգապահական տույժի միջոցների կիրառման վերաբերյալ,

3.2.5. ապահովում է Կենտրոնին վերաբերող տնօրենի հրամանների, ցուցումների, հանձնարարականների և առաջադրանքների և ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի որոշումների կատարումը,

3.2.6. զբաղվում է Կենտրոնի միջազգային համագործակցության ընդլայնման հարցերով,

3.2.7. կազմակերպում և ապահովում է Կենտրոնի գործունեությունը,

3.2.8. իրականացնում է ԵՊՀ ԻՄ կանոնադրությամբ, սույն կանոնադրությամբ, տնօրենի հրամաններով, այլ կրավական ակտերով և պաշտոնի անձնագրերով նախատեսված այլ գործառույթներ,

3.3. Կենտրոնի աշխատակիցների իրավունքներն ու պարտականությունները որոշվում են ՀՀ օրենսդրությամբ, ԵՊՀ ԻՄ կանոնադրությամբ, սույն կանոնադրությամբ, պաշտոնի անձնագրերով։

3.4. Կենտրոնի աշխատակիցներն իրավունք ունեն՝

3.4.1. մասնակցել Կենտրոնի գործունեությանն առնչվող կազմակերպական հարցերի քննարկմանը,

3.4.2. զբաղվել մասնագիտական գործունեությամբ և գիտահետազոտական աշխատանքով,

3.4.3. Կենտրոնի սարքավորումները և տարածքները, ինչպես նաև՝ ԵՊՀ ԻՄ կրթական, գիտական, սոցիալ-կենցաղային և այլ ռեսուրսները սահմանված կարգով օգտագործել հետազոտական և գիտական գործունեության համար,

3.4.4. հանդես գալ Կենտրոնի և իրենց վերապահված ոլորտներում իրականացվող աշխատանքների արդյունավետության բարձրացման վերաբերյալ առաջարկություններով:

3.5. Կենտրոնի աշխատակիցները պարտավոր են՝

3.5.1. ապահովել մասնագիտական գործունեության և գիտական հետազոտությունների բարձր մակարդակ,

3.5.2. ապահովե; ԵՊՀ ԻՄ կանոնադրությունը, սույն կանոնադրությունը և ԵՊՀ ԻՄ ներքին կարգոկանոնը,

3.6. Կենտրոնի կազմում ներառված են ԵՊՀ ԻՄ հաստիքացուցակով նախատեսված մասնագետները:

3.7. Կենտրոնի աշխատակիցների գործառույթները սահմանված են տվյալ աշխատակիցների պաշտոնի անձնագրերում:

4. ԿԵՆՏՐՈՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

4.1. Կենտրոնի գործունեությունը կարող է հիմնական կամ ժամանակավոր դադարեցվել, Կենտրոնը կարող է լուծարվել ԵՊՀ ԻՄ տնօրենի որոշմամբ:

4.2. Կենտրոնի գործունեությունը կարող է հիմնական կամ ժամանակավոր դադարեցվել, Կենտրոնը կարող է լուծարվել, ի թիվս այլ դեպքերի, նաև՝ իր գործառույթների կատարման նպատակահարմարությունը կամ անհրաժեշտությունը կորցնելու, կամ գործառույթների կատարման անհնարինություն առաջանալու դեպքերում:

4.3. Կենտրոնի գործառույթների իրականացման անհնարինության պատճառներ կարող են հանդիսանալ, ի թիվս այլ դեպքերի, նաև՝ ֆորսմաժորային իրավիճակները, Կենտրոնի ֆինանսավորման մասնակի կամ ամբողջական դադարեցումը, բյուջետային պլանավորումը համապատասխան մարմնի կողմից չհաստատվելու հանգամանքը, և այլն:

4.4. Կենտրոնի լուծարման դեպքում Կենտրոնի հաշվեկշռին առկա գույքի հարցը լուծվում է ԵՊՀ ԻՄ կանոնադրության համապատասխան: